Վերաքննիչ քրեական դատարանին

Դիմող՝ թիվ 90955212 քրեական գործով
տուժողի իրավահաջորդ
Մերուժան Կալեյանի ներկայացուցիչ
Արթուր Սաքունց
Հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Պատասխանողներ՝ 1. ՀՀ Զինվորական դատախազության դատախազ
Արտավազդ Հենրիկի Հարությունյան
ք. Երևան Սունդուկյան փող., 66ա շենք
2. ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական
բաժնի քննիչ Նվեր Ավետիսյան
ԼՂՀ, ք. Ասկերան Շահումյան 65

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

(Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. սեպտեմբերի 22-ի բողոքը մերժելու մասին որոշման դեմ)

2014 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ դատարան) դատավոր Ա. Մնացականյանը, քննության առնելով 22.07.2014թ. դիմում-բողոքը՝ ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն. Ռ. Ավետիսյանի 16.12.2013թ.՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ, կայացրել է այն մերժելու մասին որոշում:

1.Գործի դատավարական նախապատմությունը

1.1.Թիվ 90960513 քրեական գործի շրջանակներում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 2013թ. հուլիսի 3-ի դատաքննության ժամանակ գործով վկա Արման Վալերիկի Բոզոյանը հայտարարել է, որ ինքը և գործով վկաներ Գեղամ Սիրադեղյանը, Սարգիս Ավալյանը և Դերենիկ Սանամօղլյանը 10 օրից ավել գտնվել են Ռազմական Ոստիկանությունում, ենթարկվել են ծեծի, բռնության և

նրանց ստիպել են, որպեսզի իրենց ցուցմունքներում գրեն այն, ինչ քննիչը կթելադրի:

1.2.2013թ. հուլիսի 30-ին թիվ 90955212 քրեական գործի շրջանակներում հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ զինվորական և ՀՀ գլխավոր դատախազություններ:

1.3.Հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ որոշում չստանալով 2014թ. ապրիլի 15-ին դիմում է ներկայացվել ՀՀ զինվորական դատախազություն, ստանալու հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումը:

1.4.2014թ. մայիսի 7-ին ստացվել է 2013թ. օգոստոսի 16-ին քրեական գործ հարուցելու մասին որոշումը: Թիվ 90955212 քրեական գործով վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ դատախազը նշել է, որ իմ կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործը կարճվել է:

1.5.2014թ. մայիսի 31-ին իմ կողմից դիմում եմ ներկայացրել, որով պահանջել եմ տրամադրել քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

1.6.2014թ. հունիսի 6-ին ստացել եմ 16.12.2013թ. ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն. Ռ. Ավետիսյանի կողմից կայացված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

1.7.2014թ. հունիսի 11-ին իմ կողմից դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ զինվորական դատախազություն, որով խնդրել եմ վերացնել ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն. Ռ. Ավետիսյանի քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

1.8.2014թ. հունիսի 27-ին ստացել եմ ՀՀ զինվորական դատախազ Ա. Հարությունյանի՝ 23.06.2014թ. բողոքը մերժելու մասին որոշումը:

1.9.2014թ. հուլիսի 22-ին դիմում է ներկայացվել ՀՀ Երևան Քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որով խնդրել եմ վերացնել ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն. Ռ. Ավետիսյանի 16.12.2013թ.՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին:

1.10.2014թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների ընդհանեուր իրավասության դատարանի կողմից բողոքը ըստ ընդատության ուղարկվել է Սյունքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

1.11.2014թ. սեպտեմբերի 22-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննության առնելով դիմումը, կայացրել է այն մերժելու մասին որոշում, որը ստացել եմ 2014թ. հոկտեմբերի 2-ին:

2.Դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 17-րդ, 16-րդ, 27-րդ, ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածների երաշխավորված դրությունները:

2.1.Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու, Ա. Բոզոյանի նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ պնդումներ.

2.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, **օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար**»:

Վարույթն իրականացնող մարմինը հանցագործության մասին հաղորդման հիման վրա կատարել է քննություն, որի ընթացքում հարցաքննել է մի շարք վկաների, այդ թվում Արման Բոզոյանին:

Արման Բոզոյանը իր ցուցմունքում նշել է իր նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի վերաբերյալ, հայտնելով հետևյալը. «…այդ ժամանակ վերջինս իրեն հայհոյանք է տվել, մի քանի անգամ ապտակել և սպառնալիքներ տվել»: Սակայն, քննիչը անտեսելով այդ հանգամանքը, որ ռազմական ոստիկանությունում Հ. Կալեյանի մահվան փաստով քննվող քրեական գործի շրջանակներում վկան ենթարկվել է վատ վերաբերմունքի, գործում եղած ապացույցները, վկաների ցուցմունքները գնահատել է իր սուբյեկտիվ ընկալմամբ, կայացրել է քրեական

գործի վարույթը կարճելու մասին որոշում, գտնելով, որ Ա. Բոզոյանը բռնությունների չի ենթարկվել, ոստիկանության աշխատակիցների կողմից չի խախտվել Ա. Բոզոյանի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը: Հետագայում, դատարանը ևս նման գնահատականի է արժանացրել Ա. Բոզոյանի և մյուսների նկատմամբ կիրառված խոշտանգումների փաստը:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:...:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձյան՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, **վկայից** և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Սույն դեպքում Հայկ Կալեյանի մահվան փաստի շուրջ իրականացված քննության ընթացքում վատ վերաբերմունք է կիրառվել գործով անցնող վկա Արման Բոզոյանի նկատմամբ, նրանից ցուցմունքները ստացվել են ֆիզիկական բռնությունների և անազատության մեջ պահելու միջոցով, որի վերաբերյալ հետագայում Ա. Բոզոյանը հայտնել է դատական նիստի ժամանակ, ինչպես նաև հաղորդման հիման վրա իրականացված քննության ընթացքում՝ իր ցուցմունքում: Հանցագործության մասին հաղորդման հիման վրա իրականացված քննության ընթացքում Ա. Բոզոյանը իր ցուցմունքում նշել է, որ այն ժամանակ երբ ռազմական ոստիկանության աշխատակիցը իրեն հարցրել է ենթասպա Պետրոսյանի կողմից Հ. Կալեյանին ապտակելու և նրան հայհոյանք տալու մասին և ինքը պատասխանել է,

որ նման բան չի տեսել, այդ ժամանակ վերջինս իրեն հայհոյանք է տվել, մի քանի անգամ ապտակել և սպառնալիքներ է տվել: Այս հանգամանքը վարույթն իրականացնող մարմինն անտեսել է, չի տարել քննություն՝ պարզելու նրա նկատմամբ բռնություն գործադրած, ինչպես նաև սպառնալիքներ տված անձանց ինքնությունը պարզելու և համապատասխան պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Վարույթն իրականացնող մարմինը հանցագործության մասին հաղորդման հիման վրա կատարել է ահնպիսի քննություն, որը նպատակ չի ունեցել հաղորդմամբ ներկայացված հանգամանքները պարզելը, այլ իրականացրել է ձևական քննություն: Այսինքն, սույն դեպքում խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ վարույթն իրականացնող մարմինը, հետագայում նաև դատարանը գործուն և արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվել:

Ցուցմունքում Ա. Բոզոյանը նշել է, որ ոստիկանության աշխատակիցների արտաքին տվյալները չի հիշում: Վարույթն իրականացնող մարմինը, այնուհետև դատարանը գործի շրջանակներում քննություն չի իրականացրել, պարզելու Ա. Բոզոյանի ռազմական ոստիկանությունում գտնվել օրը, աշխատանքի մեջ գտնվող աշխատակիցներին պարզելու և ճանաչման ներկայացնելու համար: Այլ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ա. Բոզոյանը չի հիշում արտաքին տվյալները և զորամասում համածառայակիցներից ոչ ոքի չի պատմել ոստիկանությունում իր հետ տեղի ունեցածի մասին, այս ամենը համադրելով մյուս վկաների ցուցմունքերի հետ կայացրել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում: Վարույթն իրականացնող մարմնի կողմից չի գնահատվել այն հանգամանքը, որ վատ վերաբերմունքի, սպառնալիքի մասին, անձից ում նկատմամբ դրսևորվել է նման վերաբերմուքը, հայտնի է այն անձին ում նկատմամբ կիրառվել է: Ավելին, նման արարք կատարած ոստիկանության աշխատակիցները բնականաբար չէին տա ցուցմունք, որ իրենք նման վերաբերմունք են դրսևորել վկայի նկատմամբ:

Այն հանգամանքը, որ Ա. Բոզոյանի նկատմամբ վատ վերաբերմունք է դրսևորվել, իր որոշման մեջ ընդունել է նաև ՀՀ զինվորական դատախազը, սակայն նշում է, որ ապացույցների համադրության արդյունքում չեն հաստատվել:

2.2. Վկային անազատության մեջ պահելու վերաբերյալ պնդումներ.

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով…..:

Ինչպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, այնպես էլ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է այն բոլոր դեպքերը, որոնց դեպքում թույլատրվում է անձին զրկել ազատությունից՝ պահել անազատության մեջ: Վերը նշված իրավական ակտերից ոչ մեկը, չի պարունակում մի այնպիսի դրույթ, որը նախատեսում է քրեական գործի շրջանակներում վկային անազատության մեջ պահելը:

ՀՀ զինվորական դատախազը, բողոքը մերժելու մասին որոշման մեջ նշում է, որ համաձայն Ռազմական ոստիկանության գրության համաձայն թիվ 35383 զորամասի զինծառայող Հայկ Կալեյանի ինքնասպանության դեպքի հանգամանքները պարզելու նպատակով 2012թ. սեպտեմբերի 06-ից մինչև սեպտեմբերի 07-ը Ստեփանակերտի ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ զորանոցում պահվել են նույն զորամասի զինծառայողներ՝ Արման Վալերիկի Բոզոյանը, Վոլոդյա Նորայրի Խաչատրյանը, Սանթուր Սմբատի Դոմբրյանը, Նարեկ Կոստանի Գալստյանը, Նարեկ Մխիթարի Սերոբյանը, Արմեն Լազրի Երեմյանը, Գևորգ Սամվելի Ղազարյանը, Գեղամ Արարատի Սիրադեղյանը և Դերենիկ Սամվելի Սանամօղլյանը:

Սակայն 2013թ. հուլիսի 3-ի դատաքննության ժամանակ գործով վկա Արման Վալերիկի Բոզոյանը հայտարարել է, որ ինքը և գործով վկաներ Գեղամ Սիրադեղյանը, Սարգիս Ավալյանը և Դերենիկ Սանամօղլյանը 10 օրից ավել գտնվել են ռազմական ոստիկանությունում, ենթարկվել են ծեծի, բռնության և նրանց ստիպել են, որպեսզի իրենց ցուցմունքներում գրեն այն, ինչ քննիչը կթելադրի: ՀՀ զինվորական դատախազը իր որոշման մեջ հայտնում է այն հանգամանքը, որ Ա. Բոզոյանը և մի քանի վկաներ պահվել են ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ զորանոցում 1 օր, որը չի համապատասխանում իրականությանը, քանի որ վկան դատարանի դահլիճում ցուցմունք է տվել, որ ինքը և գործով ևս մի քանի վկաներ պահվել են ռազմական ոստիկանությունում, այլ ոչ, թե ընդունիչ-բաշխիչ զորանոցում 10 օրից ավելի՝ 1 օրվա փոխարեն: Այսինքն, վերը նշածից գալիս ենք այն եզրահանգման, որ Հ. Կալեյանի ինքնասպանության փաստի շուրջ

իրականացված նախաքննությունը կատարվել է վկա Արմեն Բոզոյանի ՀՀ սահմանադրությամբ և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մի շարք իրավունքների խախտմամբ:

Բացի վերը նշված նյութական իրավունքների խախտումներից, վարույթն իրականացնող մարմինը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ և 263-րդ հոդվածներով երաշխավորված դրույթները, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը, պատշաճ կերպով կողմին չուղարկելով: ՀՀ զինվորական դատախազ Ա. Հարությունյանը, անդրադառնալով այս հարցին, նշելով, որ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը հաղորդում ներկայացրած անձին չհայտնելու համար հրավիրվել է խորհրդակցություն, որի ընթացքում համապատասխան պաշտոնատար անձինք նախազգուշացվել են:

2.3. Դատարանի որոշումը պատճառաբանված չլինելու վերաբերյալ պնդումներ.

Որոշման իրավական վերլուծություն բաժնում դատարանը նշում է. «Դատարանը, ուսումնասիրելով բողոքի կապակցությամբ ներկայացված նյութերը, գտնում է, որ բողոքը պետք է մերժել, քանի որ քննիչը, թիվ 90960513 քրեական գործի շրջանակներում հարցաքննելով վկաներ Արման Բոզոյանին, Գեղամ Սիրադեղյանին, Արմեն Երեմյանին, Նարեկ Սերոբյանին, Նարեկ Գազարյանին, Վոլոդյա Խաչատրյանին, Սանթուր Դոմբրյանին, Գևորգ Ղազարյանին, Դավիթ Ալեքսանյանին, Դերենիկ Սանամօղլյանին, Արսեն Բարսեղյանին, Մասիս Մովսիսյանին, Կարեն Գրիգորյանին, Միեր Սարգսյանին, Գենադի Լազարյանին և Արմեն Սողոմոնյանին, օրենքին համապատասխան և առանց անձի իրավունքերը կամ ազատությունները խախտելու որոշում է կայացվել հանցակազմի բացակայության հիմքով, ...»:

Դատարանը իրավական վերլուծություն բաժնում նշում է վարույթն իրականացնող մարմինը հարցաքննել է գործով անցնող վկաներին և գտել է, որ գործի վարույթը ենթակա է կարճման, հանցակազմի բացակայության հիմքով, այսինքն դատարանը մեկ նախադասությամբ եկել է եզրահանգման, որ դիմումը ենթակա է մերժման, վարույթն իրականացնող մարմինը օրեքով որևէ խախտում թույլ չի տվել: Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի

իրականացրել դիմումով նշված փաստերը պարզելու, Ա. Բոզոյանի իրավունքի խախտման փաստը պարզելու ուղղությամբ:

Չպատճառաբանված դատական ակտ կայացնելու և դրա հետևանքով խախտված իրավունքի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել ՀՀ Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մարտի 26-ին, թիվ ԵԿԴ/0058/11/09 քրեական գործով: Նշված որոշման համաձայն՝

18. ..... Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

19. Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

Վերը նշվածից հետևում է, որ Դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված և հիմնավոր, հակառակ դեպքում այն հանգեցնում է արդար դատաքննության իրավունքի խախտման: Դատարանի կողմից կայացված որոշումը պատճառաբանված չէ, դատարանի որոշումը բաղկացած է դիմողի կողմից ներկայացված փաստարկներով և եզրափակվում է մեկ նախադասությամբ, որն ըստ էության չի հանդիսանում պատճառաբանություն կամ հիմնավորում: Դատարանը նման որոշում կայացնելով ոչ միայն խախտել է քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված սկզբունքները, այլև չի կատարել վերադաս դատարանի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պահանջը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի դրույթները՝

խնդրում եմ

բեկանել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2014թ. որոշումը և այն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության:

Կից ներկայացնում եմ.

1. 22.09.2014թ. ՀՀ Սյունքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման պատճենը,

2. Վերաքննիչ բողոքը կողմերին և դատական ակտը կայացրած դատարան ուղարկելը հավաստող ապացույց:

Դիմող՝ Արթուր Սաքունց

10.10.2014թ.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

հեռ.՝ (0479) 4-43-81 էլ. փոստ՝ dataran.syuniq@gmail.com

ԵԱՔԴ/0045/11/14
ԴԴ-31-Ե-3501
23.09.2014թ.

ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ
/Հասցե՝ ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկվում է «Բողոքը քննելու վերաբերյալ» Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման պատճենը:

Առդիր՝ որոշման պատճենը՝ «2» էջ:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԵԱՔԴ/0045/11/14

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
բողոքը քննելու վերաբերյալ

«22» սեպտեմբերի 2014թ.

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)՝ նախագահող դատավոր Ա.Մնացականյան, քարտուղարությամբ Ի.Ավագյանի, N զորամասում, դռնբաց դատական նիստում քննելով Արթուր Սաքունցի կողմից ներկայացված բողոքը

Պ Ա Ր Զ Ե Տ

2014 թվականի հուլիսի 22-ին Արթուր Սաքունցը փոստային ծառայության միջոցով բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Ըստ ներկայացված բողոքի՝ Արթուր Սաքունցը խնդրել է վերացնել «Քրեական գործի վարույթը կարճելու մասին» ՀՀ ՊՆ քննչական ծառայության 1-ին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Ավետիսյանի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը և գործն ուղարկել նախաքննության՝ մասնավորապես նշելով, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործի քննությունը կատարվել է մի շարք քրեադատավարական նորմերի ու սկզբունքների խախտմամբ:

2014 թվականի օգոստոսի 11-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Արթուր Սաքունցի կողմից ներկայացված բողոքն ըստ ընդդատության ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2014 թվականի սեպտեմբերի 22-ին Դատարան է ստացվել Արթուր Սաքունցի դիմումը, որով նա խնդրել է իր կողմից ներկայացված բողոքը քննել իր բացակայությամբ՝ ներկայացված փաստերի և հիմնավորումների շրջանակներում:

Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ.

2013 թվականի օգոստոսի 16-ին ՀՀ ՊՆ քննչական ծառայության 1-ին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Ավետիսյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 90960513 քրեական գործը՝ այն բանի համար, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ 90955212 քրեական գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Արթուր Սաքունցը հանցագործության մասին գրավոր հաղորդում է տվել այն մասին, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հուլիսի 3-ի դատաքննության ժամանակ թիվ 90955212 քրեական գործով վկա, ՊԲ թիվ 35383 զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Արման Վալերիկի Բոզոյանը հայտարարել է, որ 2012 թվականի սեպտեմբերի 6-ից մինչև

սեպտեմբերի 7-ը գտնվել է Ստեփանակերտի ՌՈ բաժնում, որտեղ սպաների կողմից նրա նկատմամբ բռնություն է գործադրվել և անձի արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ հնչեցվել:

2013 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ՊՆ քննչական ծառայության 1-ին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Ավետիսյանի որոշմամբ թիվ 90960513 քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Դատարանի իրավական վերլուծությունները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա:

Դատարանը, ուսումնասիրելով բողոքի կապակցությամբ ներկայացված նյութերը, գտնում է, որ բողոքը պետք է մերժել, քանի որ քննիչը, թիվ 90960513 քրեական գործի շրջանակներում հարցաքննելով վկաներ Արման Բոզոյանին, Գեղամ Սիրադեղյանին, Արմեն Երեմյանին, Նարեկ Սերոբյանին, Նարեկ Գազարյանին, Վոլոդյա Խաչատրյանին, Սանթուր Դոմբրյանին, Գևորգ Ղազարյանին, Դավիթ Ալեքսանյանին, Դերենիկ Սանամօղլյանին, Արսեն Բարսեղյանին, Մասիս Մովսիսյանին, Կարեն Գրիգորյանին, Միհեր Սարգսյանին, Գենադի Լազարյանին և Արմեն Սողոմոնյանին, օրենքին համապատասխան և առանց անձի իրավունքները կամ ազատությունները խախտելու, որոշում է կայացրել հանցակազմի բացակայության հիմքով թիվ 90960513 քրեական գործի վարույթը կարճելու մասին, որպիսի պայմաններում Արթուր Սաքունցի կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ և 379-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արթուր Սաքունցի կողմից ներկայացված բողոքը՝ «Քրեական գործի վարույթը կարճելու մասին» ՀՀ ՊՆ քննչական ծառայության 1-ին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Ավետիսյանի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը վերացնելու և գործը նախաքննության ուղարկելու վերաբերյալ, մերժել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ հրապարակելու օրվանից տասնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Վ. Առաքելյանից
[illegible] փող. 40
[illegible]

712

Վ. Համբարյանին
[illegible] փող. 59
Արցախ. Ստեփանակերտ

0045/11/14 (1)